ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Դարբնիկ համայնք,գ. Դարբնիկ,Կենտրոնական փ. N 8,
հեռ: 0236-6-42-62;էլ. փոստ: darbnikigyuxapetaran2011mail@.ru

ՈՐՈՇՈՒՄ

« 29 » նոյեմբերի 2012 թվականի N 17-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԲՆԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 16 հոդվածի 18 կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության Օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների պահանջներով, ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դարբնիկ համայնքում 2013 թվականի համար տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար

1/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների,ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ:

2/ սույն կետի «1»-ին ենթակետում չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ;

բ. 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 դրամ;

գ. 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 դրամ:

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ;

4/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման,ուժեղացման,վերականգնման,արդիականացման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջող դեպքերի/ համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ չի նախատեսվում կառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն

ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 15000 դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի,շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանել՝ 2500 դրամ:
4. Համայնքի վարչական տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
   1/ ոգելից խմիչքների վաճառքի թույլատվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում,յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ;
   2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլատվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառք կազմակերպելու դեպքում,յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 3000 դրամ:
5. Համայնքի տարածքում.
   1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ;
6. Համայնքի վարչական տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու համար 1քմ տեղական տուրքը սահմանվում է՝
   1/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ;
   2/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:
7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5000 դրամ:
8. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 10000 դրամ:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու,ավարտված շինարարության փաստագրելու համար,մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 10000 դրամ;
2. համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում,անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 5000 դրամ;
3. համայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար՝ 3000 դրամ:

Կողմ (5) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՐՄԵՆՍՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ՍԱՆՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԶԻՐՅԱՆ

ԱՇՈՏ ՄԱՐԿԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱԶԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ